

Տարեկան գինը 10 րուբլի, կես տարեկանը 6 րուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

(Պատրաստողը գիտում են ուղղակի
Тифлис. Редакция "Мир")

ՄԵՆԿ

Խմբագրատանը բաց է առաջին 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Հայտարարութիւնը ընդունվում է ամեն չեղուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ԶԱՐԺՈՒՄ

Ամեն անգամ, երբ մահմետական աշխարհին դրսից որ և է վտանգ է սպառնում, աւելն անգամ երբ թիւրքիան նեղ դուրս է գտնվում, թիւրք կառավարութիւնը աշխատում է արուեստական կերպով յարուցանել մահմետականների մէջ կրօնական մոլեռանդութիւնը:

Կրօնական մոլեռանդութեան շարժումը նշամարեի եղաւ վերջին ուս թիւրքաց պատերազմից առաջ ել երբ Ա. Պարսի մէջ գումարվեցաւ եւրոպական կոնֆլիքտը:

Նոյն կրօնական մոլեռանդութիւնը երեւան է գալիս թիւրքիայի մահմետականների շրջանում և այժմ, երբ խօսք կայ Հայաստանում վերանորոգութիւնների իրագործելու մասին:

Թիւրքաց կառավարութիւնը,

որ առհասարակ համբերում է որ մահմետականները ճնշեն, հարստահարեն, հալածեն քրիստոնէաներին, հէնց որ խօսք է լինում թիւրքիան վերանորոգելու, իսկոյն փոխում է իր գործունէութեան եղանակը և սկսում է հաւատացնել աշխարհին, որ հարստահարողները քրիստոնէաներն են, իսկ հարստահարվածները իսկաւ մահմետականներն են:

Եւ ահա այժմ, երբ Բ. Դուռը համոզվեց որ Եւրոպան յետ չի կանգնի իր պահանջներից Օսմանեան պետութեան թէ եւրոպական և թէ ասիական նահանգներում վերանորոգութիւնները մտցնելու, մահմետական աշխարհը սկսում է յուզվել, աղաղակներ դնել հաւատացնել որ Բուսթիայի մէջ քրիստոնէաներն են հարստահարում անմեղ մահմետականներին, որ Հայաստանում էլ մահմետական տարրը տանջվում է հայերի ձեռքից և այն: Ա. Պարսի թիւրք լրագիրները կատաղի կերպով խօսում են Ենզլիայի և ամբողջ Եւրոպայի դէմ, հաւատացնում են որ Հայաստան առնուով երկիրն էլ չի կայ երկրա-

գնտիս վրա, որ այն, ինչ որ տնւանում են Եւրոպիայի, դա Քիւրդիստանն է, հաւատացնում են որ քիւրդը վայրենի և արիւնաբերու ցեղ չէ, այլ բազաբակիր լուսաւորված ազգութիւն է, և այն...

Այդ բոլոր ծաղրական և ոգորմելի դատողութիւնները վերջին ճիշդն է, որ թափում է մահմետական աշխարհը իր դարեւոր անշարժութիւնը անդորր պահպանելու համար:

Լոյսը և շարժումը այն ոյժերն են, որոնցից ամենից շատ է վախենում մահմետական աշխարհը:

Եթէ մահմետականները իրանց ցոյց են տալիս լուսաւորված, թէ և ասիական կրթութեան պատկանող մի ցեղ, ինչի են վախենում այն բարեկարգութիւններից, որոնց միտցնելը պահանջում է Եւրոպան...

Թիւրքաց կառավարութեանը, ի հարկէ, օգուտ չէ, որ նրա հպատակները լուսաւորվեն, սկսեն ապրել բարեկարգ, մարդավայել կեանքով, բայց Հայաստանի մահմետականները վերջապէս պէտք է հասկանան որ իրանց ապագայ

բարօրութեամբ հայերին պարտական կը լինեն...

Թիւրքահայատակ քրիստոնէայ ազգերից հայն է որ ամենից շատ է տանջվել և նոյն իսկ հային են պարտական Փորը-Եսիայի մի անաղկեր, թէ քրիստոնէաները և թէ մահմետականները, որ ստանալու են վերջապէս մարդավայել իրաւունքներ:

Սան-Ստեփանոսի դաշնագրի 16-րդ յօդուածը և Բերլինի դաշնագրի 61-որդ յօդուածը թէ և հայերին են վերաբերվում, բայց նոր կեանք պէտք է տան ամբողջ Փորը-Եսիային:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇԵՐԱՄԱՍԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱ

Կեկեր քաղկու ժամանակ ապրիանիւմ ու փառվածները (յօքա) առանձին են հաւաքում, մնացեալիցն էլ վրայի աւելորդ ուսուցիչները, կամ այսպէս անուանեալ ծուրր խառնուրդ միջակ են հաստ, թաղիքի պէս հիւսուածք ունեցողները (բամբա): Հաւաքած կոկերն առանց չորացնելու՝ ծախում են անդացի մեաքս քաշել աւելորդներն, որոնց

պիսի մի ընկերութեան հիմնովի մէջ, կը լինէր նախ, անկանաւ, այն, որ օտար և անգին քաղաքում, որպէս Փարիզ, առանց մի ընկերութեան անկարելի է տեսնել, պահպանել և ինքնուր անկախ, որը պիտի լինի այդպիսի քաղաքում զանազան բազմաթիւ ուսանողների մէջ: Եւ ճշմարիտ, եւ զայնացած էր, 1878 թին իմ այնտեղ եղած ժամանակ, երբ համադրեցի, թէ հաճախ ուսանողներին ոչ մի բարոյական կայ իրար չէ կապում, հազիւ թէ իրանք ճանաչին, հազիւ թէ, տարիներով այնտեղ ապրած և ուսած, իրար երկու երեք անգամ խօսակցած լինէին: Մի խօսքով, Փարիզում կային հայ ուսանողներ, բայց չէր հայ ուսանողութիւն, Այս նոր ընկերութիւնը կը տայ միջոց այնտեղ եղած հայերին պարբերապէս ժողովել միասին, իբր նեո խօսել ազգային և կամ ալ գործերի վրա, իբր մի զգալ, մի օգով հնչել, մի հոգով վառուել:

Բայց թէ ինչ ազգային օգուտներ կարելի է սպասել այդպիսի մի ընկերութիւնից, այդ կը տեսնէ ընթերցողը վերջը:

Գանք մեր նիստերին:
Առաջին նիստին, որին եւս մասնակից էին ներկայ էին մօտ քսան ու հինգ անձներ, մեծ ամանութեամբ ուսանողներ, երեք չորս վաճառականներ և երկու հայ ոսկերիչ արհեստաւորներ: Ընկերութիւնը իր սեպական և մշտնջենաւոր ժողովածոյի հունէ դեռ, այնպէս որ ժողովը մի վարձու դահլիճի մէջ պիտի կայանար rue d'Arras փողոցի վրա, վաճառական ամեն անգամին եօթը փրանկ: Ընկերութեան դիւանը բաղկացած է ինը անձերից, որոնցից յիշեք այնտեղ միայն նախագահն է: Թիւրքիան, առնանալով պ. Բաշայեան և գանձապետ պ. Շերալիսեան: Վիճարանութիւնները ի-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԽԱԳ ԴԵՐԱՄԱՆԻԱՅՑ

Դեռ յունիս ամսումն էր, երբ Փարիզից հանուեալ նամակը ստացայ:
«Մեծայայտ Տէր,
Փարիզի հայ ուսանողքն, ուսանողներ ամսի 11-էն ի վեր ընկերութիւն մը հիմնեցինք: Հայկազեան Ուսումնասիրաց Ընկերութիւնն անուամբ, որ նպատակ ունի հայաստանի որ և աղքատ մանկաւորն բարձրագոյն ուսումներ ձրիաբար տալու նպատակ: Աւելորդ կը համարեմք ձեզ յիշեցնել թէ արդարեւ ազգերին միջոց և մասնաւոր իւր ներկայ դրութեանը մէջ որպիսի կարի և անմիջական պէտք ունի մտաւորական զարգացման գործովը զբաղուելու և եթէ մերք, ուսանողքս, զի տուլիման սրբանուէր տաճարներով ազգերին և հայրենիքին ծննդեցնել չը փութաւոր, ու մեծաթաւ տէր դուք որ ուսանողաց համաշխարհային եղբայրական դատուն կը պատկանիք, զուր որ ազգաւ և ընկերական կապակցութեամբ մեզ աւելի առնալով ինչ, ճարկ անհրաժեշտ է, որ ոչ միայն ձեր ընկերակցութեամբ, այլ նաեւ ձեզ ծանօթ բարեկամաց ընկերակցութեամբ մեր ընկերաց թիւը ստուարացնէք, և վստահ դրով որ մեր

առաջարկութիւնը սիրով պիտի ընդունիք, կը փութաւոր ներկայիս հրաւեր կարգով ձեզ, խնդրելով որ ձեր կողմանէ եւս ամեն ջանք և փոխը ինչպէք մեր նորարդող ընկերութեան ծաւալմանը, հրաւեր կարգով ամենուրեք և ամեն անոնց՝ որոնց ուսումնասիրութիւնն ու ազգասիրութիւնը ձեզ ծանօթ են, ինչպէս են ձերն առ մեզ:

Դառով ընկերակցութեան պայմաններուն, ձեզ կուղարկեմք ներկայիս նա եւ ընկերութեան կառնուադիր, յորմէ կրնաք տեղեկանալ, իսկ եթէ աւելի օրինակներու պէտքը տեսնէք, հաճեցէք մեզ գրել, քանի օրինակ ուզէք անմիջապէս կրտանաք: Պիտի տեսնէք թէ կանօնադրինս դեռ սպեալ չէ, վասն զի վերջնական կերպով ապրել առաջ, կը փափագէինք փորձառութեամբ տեսնել թէ ինչ են այն կէտերը որ փոփոխութեան պէտք ունին, այս ինչովըր այժմ դիւանի և մասնաժողովի մը քննութեան յանձնուած է, և ուրախութեամբ կընդունինք ամեն այն դիտողութիւնները որ մեզ ծանուցանել պիտի բարեհաճէք, այս առթիւ սա եւ կը ինչպէք, որ եթէ ձեր կողմերը մեր ընկերութեան համապատասխան կամ նմանօրինակ ընկերութիւններ կան, անոնց կանոնադրութիւններէն մէկ մէկ օրինակ վաղ ընդ փոխ մեզ խրկելու չնորձն ընէք:

Խնդրելով որ բարեհաճէք ընդունել մեր անկեղծ զգացմանը ջերմ հաւատովը, մնամք ի դիմաց Դիւանի Առնանալեան Զ. Թիւրքիզեան, առնանալեան Ս. Ռաֆայելեան:

Ի զիմաց այսպիսի սիրաբար նամակի, անկարելի էր անտարբերութեամբ ձեռքերը խաչել, հարկաւոր էր գործել: Կանօնադրութիւնը, բաղկացած 37 յօդուածներից, ներկայացնում էր բազմաթիւ թեւթիւններ, բարեբաղդաւոր նա միայն մի առա-

ջարկութիւն էր, որը դեռ պիտի ընդունէր, որի համար առանձին մասնաժողով կազմված էր և բնկերութեան անդամների քուէին պիտի ներկայվէր:

Մեր ամսի վերջերում հրաւեր ստացած լի ներկայ փարիզից կանօնադրութեան քննողական նիստերին ներկայ գտնվելու և վիճարանութիւններին մասնակցելու, կամ այնտեղ գնալը քանի մի օրով աճապարեցի և մի շաբաթից յետ ունեցանք նիստ, որը քննողութեան երկրորդ նիստն էր արդէն:

Բայց նախ քան այդ նիստերի և կանօնադրութեան հարցի վրա խօսենք, աւելորդ չենք համարում մեր ընթերցողներին ծանօթացնել ընկերութիւն հիմնելու աշտոյակ միտք ունեցած այն պատական երիտասարդին հետ, որը իր հայրենա սէր հոգով և ողջմասն ձգտումներով հանդերձ, իր բնական ճարտար ընդուն և դիւրամբը գրկել ամբողջով այդ գաղափարին ծառայեցնելու քաջասիրտ համարձակութիւնը ունեցած է: Այդ երիտասարդն է պ. Սիմէօն Ռաֆայելեան, ոտն քայլէլս ընկերութեան առնանալիք, հասակը արդէն առած, ուսանող բժշկութեան փարիզում: Մէկը նոցանից, որոնց համար խօսքը կէս գործ է, իսկ գործը տաք խօսք: Համառոտ բնասորութեամբ, հոանդու գործի մէջ, ճարտար և տաղանդաւոր, մի և նոյն ժամանակ լիքը նոր գաղափարներով ազգային հարցերի վերաբերեալ, պատուած իւր բոլոր ընկերներից և բարեկամներից, նա ընկերութեան սինն է և ամենաառաջին գործողը: Իր հրաւիրական նամակներով դէպի եւրոպական ուսանողութեան բոլոր ներկայացուցիչները, նա արդէն կարողացել է բազմաթիւ բարեկամներ գրաւել ընկերութեան համար:

Ամենաառաջին միտքը, որը կարող էր ծնւել այդ-

Продажа производится въ книжныхъ магазинахъ: Беренштама, Кавказской книжной торговлѣ и Центральной книжной торговлѣ. Цѣна **4 руб. сер.**; на пересылку прилагается за 5 фунт.